


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա
Ծ Ր Ա Գ Ի Ր
(Հ Ջ Հ Ծ)

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից:

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի կողմից:

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 3-Ն որոշմամբ:

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ուղերձը	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	5
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	5
2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	8
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը.....	22
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	24
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	30
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	33
3.1 Համայնքի զարգացման տեսլական	33
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	33
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	41
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)	41
6. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում.....	42
7. ՀՀԶԾ իրականացումը	42
8. ՀՀԶԾ գնահատում	43
9. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	44
Հավելված 1 - Համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը ...	46
Հավելված 2 - Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը	47
Հավելված 3 -01.07.2016թ. դրությամբ համայնքի վարչական տարածքի հողերի վերաբերյալ տվյալներն՝ ըստ հողատեսքերի	56
Հավելված 4 - Աշտարակ համայնքում գործող առևտրի, ծառայությունների ցանկը.....	60
Հավելված 5 - Հապավումների ցանկ.....	62
Հավելված 6 - Ծրագրերի անձնագրեր	63

1. Համայնքի ղեկավարի ուղերձը

ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2016 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն):

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցվածքները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ,

ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ոհսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Աշտարակ համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

1996թ-ից Արագածոտնի մարզկենտրոն դարձած Աշտարակ համայնքը հանրապետության միջին մեծության քաղաքներից է:

Գտնվում է Երևանից մոտ 20կմ հյուսիս-արևմուտք, Քասաղ գետի երկու ափերին, ծովի մակերևույթից 1075մ միջին բացարձակ բարձրության վրա: Ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Գտնվում է Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին ուղիների հատման վայրում:

Աշտարակ հնամենի բնակավայրը հիշատակվում է անհիշելի ժամանակներից: Նրա անվան շուրջ տարբեր մեկնաբանություններ կան: Տեղանվան մեկնաբանման փորձեր են արել Նիկողայոս Մառը, Գրիգոր Ղափանցյանը, Հակոբ Մանանդյանը: Բնակիչների ասելով Աշտարակ անունն առաջացել է գյուղի ամենամեծ ծխական եկեղեցու՝ Ծիրանավորի, դիրքից:

Ակադեմիկոս Մառի ասելով՝ Ծիրանավոր եկեղեցու տեղում, հեթանոսության ժամանակաշրջանում եղել է Շտեկի պաշտամունքի մի տաճար, որի շուրջ հետագայում գոյացել է գյուղ և հնագույն սրբության անունով կոչվել է Աշտարակ:

Ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանն իր ծննդավայրի՝ Աշտարակի անվան բացատրությունը առնչում է սիրո և զգվանքի ասորական աստվածուհի Իշտարի անվան փյունիկյան Աշտար արտահայտչաձևին:

Աշտարակը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ, ինչպես նաև Հայաստանի չափանիշներով բարենպաստ կլիմայով: Աշտարակը պատմականորեն միշտ աչքի է ընկել ավանդույթների անխառն պահպանմամբ և իր ուրույն դեմքն ունենալու շնորհիվ ներկայացել է որպես Հայաստանին առավել բնորոշ գյուղ, իսկ 1965թ-ից՝ որպես քաղաք: Աշտարակ քաղաքը իր ուրույն տեղը ունի նաև Հայաստանի գյուղատնտեսության, արդյունաբերության և հատկապես գիտության մեջ:


Աղյուսակ 1. Համայնքի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (տա)	Առկա բնակչության թվաքանակը (մարդ)	Մշտական բնակչության թվաքանակը (մարդ)	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը
•	Աշտարակ	4233.8	19174	23596	5478	6177


ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության առկա թիվը 23596 մարդ, որից կանայք 12167, տղամարդ 11429: Ընտանիքների /ծխերի/ թիվը՝ 5478

Բնակչության սեռատարիքային կազմը



Տնային տնտեսությունների քանակն ըստ շնչերի թվի



Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	ընդամենը	կին	տղամարդ
1	2	3	4	5
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	23596	12167	11429
2.	Կենսաթոշակատուներ, այդ թվում՝	3512	1801	1711
	Տարիքային	263	165	98
	Աշխատանքային	1350		
3.	Փախստականներ	5	2	3
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	141	76	65
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0		
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1070		
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ			
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	1641	993	648
	Մանկուց հաշմանդամներ	55	20	35
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	6482		
13.	Ընտանեկան նպաստների պետական համակրգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	3533		

	Նպաստառու ընտանիքների թիվը	1023		
14.	Հայրենական մեծ պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը	507		
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	42		
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	1350		

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման համակարգը արդեն թևակոխել է գործնական ծրագրերի իրականացման փուլ: Համայնքապետի ղեկավարությամբ օրեցօր մեծ տեղ է հատկացվում նոր հարաբերությունները կյանքի կոչելու խնդիրներին ու դրանց իրականացմանը:

Ավելի մոտ գտնվելով բնակչությանը և քաջատեղյակ լինելով համայնքի առանձնահատկություններին, հանդիսանալով իշխանության առանձին օղակ, այսօր ինքնուրույն ձևով և անձնական պատասխանատվությամբ են լուծվում համայնքի առջև ծառայած խնդիրներն ու հարցերը:

Բնակֆոնդի և հասարակական վայրերի սպասարկում, սանիտարական մաքրում, աղբահանություն, կանաչապատում և լուսավորում, կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների սպասարկում: Ահա այն կարևոր բնագավառների ոչ լրիվ ցանկը, որոնք սպասարկում է տեղական ինքնակառավարման մարմինը:

Համայնքապետարանի մշտական ուշադրության կենտրոնում են խմելու և ոռոգման ջրամատակարարման, կապի, տրանսպորտի սպասարկման բարելավման, փոքր և միջին բիզնեսի զարգացման հարցերը:

Սակայն նշված և ևս կարևոր շատ հարցերի լուծման ճանապարհին դժվարություններ են առաջանում կապված ֆինանսական միջոցների հետ:

Համայնքի ամբողջ տարածքում բնակչության հետ անմիջականորեն տարվող աշխատանքները կոորդինացվում, համայնքի ղեկավարի ընդունած որոշումների ու կարգադրությունների մասսայական աշխատանքներին աջակցում են “Տարածքային կառավարման տեղամասերը” (ՏԿՏ-ները):

2016թ. Սեպտեմբերի 18-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ղեկավարը, համայնքի ավագանին՝ բաղկացած 15 անդամից: Համայնքի ղեկավարն ունի 2 տեղակալ, 1 խորհրդական: Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 4-Ա որոշմամբ հաստատել է համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Աշխատակազմ -10

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

- Ֆինանսատնտեսագիտական բաժին - 10
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին -5
- Ներքին աուդիտի բաժին 2

Առանձնացված ստորաբաժանումներ՝

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Աշտարակի տարածքային բաժին-3

Պայմանագրային աշխատողներ - 13

Համայնքն ունի իր զինանշանը, դրոշը և օրհներգը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը ներկայացված է հավելվածի տեսքով:

Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 6-Ա որոշմամբ հաստատել է համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը բերված է **հավելված 1-ում**:

Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը բերված է **հավելված 2-ում**:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով գնահատման ներքոհիշյալ չափանիշները (գնահատականները):

- ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
- բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
- գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
- դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
- ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես (քառ. մ.)	Ընդհանուր վիճակի գնահատական
1	քաղաքային մարզադպրոց	Աշտարակեցու 33	1951	500	շատ վատ
2	N1 ՆՈՒՀ	Ղափանցյան 1	1979	2021.4	
3	N 2 ՆՈՒՀ	Ա.Մանուկյան 13	1966	1190.6	
4	N 3 ՆՈՒՀ	Արտակի 15	1961	1102.9	
5	N 4 ՆՈՒՀ	Աշտարակեցու 80	1969	1332.3	
6	N 5 ՆՈՒՀ	Պռոշյան 10	1965	855.7	
7	քաղաքային մշակույթի տուն	Ն. Աշտարակեցու հր. 5	1950	1436	
8	Արայի մշակույթի տուն	Արցախի 15	1964	2652	շատ վատ
9	Ա. Այվազյանի անվան երաժշտական դպրոց	Աշտարակեցու 10	2012	1500	
10	ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ	Աշտարակ համայնք			վատ

11	ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ	Աշտարակ համայնք			շատ վատ
12	ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ	Աշտարակ համայնք			վատ
13	Քաղաքապետարանի վարչական շենք	Ն. Աշտարակեցու հր.7	1961	1670	Բավարար
14	ներհամայնքային փողոցներ և հրապարակներ	Աշտարակ համայնք			բավարար
15	ներհամայնքային նշանակության ճանապարհներ	Աշտարակ համայնք			վատ
16	Ավտոտնակներ	ք. Աշտարակ	1961	1920	Վատ
17	Քաղաքային լուսավորության հենասյուներ	ք. Աշտարակ	1980	-	Բավարար
18	Ներհամայնքային կամուրջ	Նաիրյան	1982	280	Բավարար
19	գերեզմանատուն	Աշտարակեցու փողոց		22000	Բավարար
		Էջմիածնի խճուղի		12000	վատ
		Մուղնի թաղամաս		10300	բավարար
20	հանգստի գոտի	Արևիկ հանգստի գոտի Քասախի կիրճ			Գերազանց
		Աշտարակի Չոր Քասախի կիրճ 1			Գերազանց
		Արծվի թևեր			Գերազանց
		Գալուստի ձոր Քասախի կիրճ			Գերազանց
21	մշակույթի և հանգստի զբոսայգի	Տիգրան Մեծ 2	1960	37355	շատ վատ
		Ա.Մանուկյան 4	1960	31288	

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշտարակը հայկական իրականության վաղ, ինչպես նաև միջին դարերի ճարտարապետական կոթողների բնակավայր է: Այդ են վկայում մինչ այժմ գոյություն ունեցող պատմական մեծ արժեք ներկայացնող 4-17-րդ դարերի Ծիրանավոր,

Սպիտակավոր, Կարմրավոր, Մարինե եկեղեցիները, ուրարտական ժամանակաշրջանի ջրանցքը և այլն:

Աշտարակը գրավոր աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից սկսած, սակայն ձորամիջյան քարայր կացարանները, քաղաքը շրջապատող դամբարաններն ու աշտարակները ծոտում են հազարամյակների ապրած բնակավայրերի մասին: Պահպանված բազմաթիվ հայ արվեստի և ճարտարապետության նշանավոր հուշարձաններից արժանահիշատակ են «Մայր առու» կամ «Ականատեսի առու» մթա 8-7 դդ-ի գործող ժայռափոր ջրանցքը, հեթանոսական մեհյանի վրա 5-րդ դարում կառուցած ծիրանավոր ս. Աստվածածին եռանավ բազիլիկ եկեղեցին, որը կառուցվածքային պարզությամբ, հարադրանքի տարրերով առանձնահատուկ կարևորություն ունի վաղ շրջանի հայկական եռանավ բազիլիկների շարքում: Հայկական ճարտարապետության գոհարներից է համարվում կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիներին պատկան Կարմրավոր ս. Աստվածածին միախորան խաչաձև հիմքով եկեղեցին: Քաղաքում մյուս նշանավոր հուշարձաններից են 1287-ին կառուցված ս. Մարինե եկեղեցին՝ սրածայր գմբեթով և ծավալի վերալաց հորինվածքով, Քասախի կիրճի պռնկներին դեմ-դիմաց կանգնած, 12-13 դդ-ի Սպիտակավոր և ս. Մարգիս եկեղեցիները, ինչպես նաև ներքևում՝ գետի վրա, վեհորեն կանգուն՝ 76.2մ երկարությամբ և 6 մ լայնությամբ, եռաթռչք տուֆակերտ կամուրջը՝ կառուցված 1664թ., որի առաջին հենակամարը մուտք է հանդիսանում կից պատմական ջրաղացին: Իր արտաքին ճարտարապետության մեջ տուֆաքարի բազմագույն նրբագեղությամբ հանրահայտ հուշարձան է Մուղնու ս. Գևորգի վանական համալիրը՝ կառուցված 1664-1669 թթ., ճարտարապետներ Սահակ Հիզանեցու և Մուրադ Մուղնեցու կողմից: Աշտարակ քաղաքը հանրապետության այն բացառիկ բնակավայրերից է, ուր պահպանվել են 18-19 դդ-ի հայկական ժողովրդական տների հիանալի օրինակներ:

Աշտարակը հարուստ է նաև ժողովրդական տների ճարտարապետությամբ, որոնք, ցավոք, ոչնչացվեցին 60-ական թթ., նրանց տեղը կառուցելով միապաղաղ 5 հարկանի շենքեր, որոնք այժմ շահագործման համար պիտանի չեն: Աշտարակի նախկին կերպարը, որպես յուրահատուկ քաղաք չի պահպանված: Կառուցված են շենքեր, որոնք իրենց ճարտարապետական տեսքով և նախագծային լուծումներով չեն կապվում ռելիեֆի հետ, ընդհանրապես կառուցելիս հաշվի չառնելով քաղաքի գլխավոր հատակագիծը:

Սոցիալիստական ժամանակաշրջանում ծավալված պլանաչափ, բայց հախուռն շինարարությունը, որի ժամանակ կառուցվում էին շաբլոն, ստերեոտիպ նմուշների շենքեր, հաշվի չէր առնվում ոչ միայն Աշտարակի բնական, ազգային և պատմական առանձնահատկությունները, այլև սահմանված խիստ նորմատիվներով սահմանափակում է քաղաքացիների նորմալ ապրելակերպի կազմակերպման հնարավորությունները:

Ներկա ժամանակում հնարավորություն ունենք գերծ մնալու նախկինում կառուցված շաբլոն ստերեոտիպ նմուշների շենքերից, շինություններից և կառուցելու Աշտարակ քաղաքի կերպարին և միջավայրին հարազատ կառույցներ, որոնք քաղաքին թույլ կտան ունենալ իր յուրահատուկ դեմքը:

Ոչ պետական, ոչ համայնքային սեփականություն հանդիսացող բազմաթիվ շենքեր վերածվել են ավերակների:

Համայնք ունի գլխավոր հատակագիծ:

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի բնակարանային ֆոնդն ընդգրկում է 639873.0 հազար քառակուսի մետր մակերես: Աշտարակ քաղաքում բնակարանային ֆոնդի սպասարկումը իրականացվում է քաղաքապետարանի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից: Քաղաքում կա վթարային 3 շենք, 2-ը 5, 1-ը 4 հարկանի: Խորհրդային տարիներին բնակելի ֆոնդի կառուցումը, շահագործումը և պահպանումը իրականացվում էր պետական միջոցների հաշվին: Ներկայումս պետական միջոցների սղության պայմաններում բնակելի շինարարության ֆինանսավորման բեռը տեղափոխվում է անհատների միջոցների վրա: 2013թ-ից իրականացվելու է սոցիալական բնակարաշինության ծրագիրը:

Բազմաբնակարան շենքերի բնակարաններ և բնակելի տներ

		Քանակը, միավորը	Ընդհանուր մակերեսը, քմ
1	<i>Բազմաբնակարան շենքերի բնակարաններ, ընդամենը</i>	3139	184415
1.1	Այդ թվում ըստ սենյակների քանակի՝ մեկ սենյականոց	463	14832
1.2	Երկու սենյականոց	914	42719
1.3	Երեք սենյականոց	1360	97920

1.4	Չորս սենյականոց	402	28944
2	Բնակելի տներ	3480	45548

Բազմաբնակարան շենքեր

		ընդամենը	Այդ թվում ըստ արտաքին պատեր նյութերի		Տանիքի ձևը՝ թեք
			քարից	պանելային	
1	Շենքերի քանակը, ընդամենը	202	157	45	202
1.1	Այդ թվում մեկ հարկանի				
1.2	Երկու հարկանի	135	96	39	135
1.3	Երեք հարկանի	9	9		9
1.4	Չորս հարկանի	18	17	1	15
1.5	Հինգ հարկանի	39	35	4	39
1.6	Ինը հարկանի	1		1	1

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը 4233.80 հա, այդ թվում՝

- բնակարանային ֆոնդ – 1186.71 հա
- արտադրական նշանակության հողեր – 121.39 հա
- գյուղատնտեսական նշանակության հողեր- 2720.40 հա
- հանգստի գոտիներ- 3.02 հա
- ջրային ֆոնդեր – 17,05 հա
- այլ – 121,11 հա
- Բնակավայրի տարածքը -1186,71հա
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը – 2980
- Մեկ հողաբաժնի չափը – Աշտարակ տեղամասում՝ 0.3 հա, «Արայի» տեղամասում՝ 0,65 հա
- Համայնքի սեփականություն համարվող հողերը – 1317.28 հա
- Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները – 1437,6 հա

Հավելված 3-ում բերված են 01.07.2016թ. դրությամբ համայնքի վարչական տարածքի հողերի վերաբերյալ տվյալներն՝ ըստ հողատեսքերի:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հողային ստրուկտուրան խիստ փոփոխական է համեմատած այլ շրջանների հետ: Մի փոքր հողակտորում կարող է լինել և սևահող, և գորշ շագանակագույն հող և անօգտագործելի տարածք:

Դարերի ընթացքում մշակվել է խաղող, որից ստացված գինիները աշխարհում մեծ համբավ են վայելում: Խերեսացված գինիների հիմնական շտեմարանը Աշտարակն է:

Գերակշիռ մասն է կազմում նաև պտղաբուծությունը, որը վերջին 20 տարիների ընթացքում մեծ առաջխաղացում է ապրել: Հիմնականում մշակվել է ինտենսիվ պտղաբուծական տնկարկներ /խնձորենի/, որը հարմարվելով տեղական բնակլիմայական պայմաններին տալիս է բարձր և որակով բերք:

Գյուղացիական տնտեսությունները զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ, որը մասամբ է բավարարում քաղաքի առօրյա պահանջներին: Վերջին մի քանի տարիների ընթացքում բնակչությունը զբաղվում է նաև հացահատիկի, անասնապահական մթերքների արտադրությամբ, որը նույնպես չի բավարարում քաղաքի պահանջներին:

Գյուղատնտեսական զարգացմանը խոչընդոտում են գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները, նախ և առաջ գյուղ. մթերքների ցածր գները, ոռոգման հետ կապված դժվարությունները, գյուղատնտեսության կարիքներին արձագանքելու անհրաժեշտ օղակների թերզարգացած վիճակը կամ իսպառ բացակայությունը /ագրոսպասարկման, ֆինանսավարկային, ապահովագրական/ և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքի բյուջեի զգալի մասը ձևավորվում է հողի հարկից, պոտենցիալ հարկատուների տնտեսական վիճակը ձեռք է բերում կարևորագույն նշանակություն: Իհարկե չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այդ հարցը առնչվում է նաև զբաղվածության, պարենային և այլ կարևորագույն խնդիրների հետ:

Արոտավայրերի ջրաբքիացվածության մակարդակն անբավարար վիճակում է:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշտարակը անխոս ունի հրաշալի բնություն: Աշտարակի միջով է անցնում Հայաստանի ամենագեղատեսիլ գետերից մեկը՝ Քասաղ գետը, որն իր խորունկ ժայռերով դյուրիշ տպավորություն է թողնում Աշտարակ այցելած յուրաքանչյուր մարդու վրա: Խորը ազդեցություն է թողնում նաև հին կամուրջը, որը վերանորոգումից հետո ներկայացնում է հնի և նորի միաձուլումը: Աշտարակը միշտ առանձնացել է իր հարուստ և փարթամ բնությամբ, սակայն 90-ական թվականների ծանր ճգնաժամային տարիներն իրենց հետևանքը թողեցին, որի արդյունքում հսկայական հեկտարներով ֆաունա ոչնչացան՝ Կոմիտասի այգին, Քասախի կիրճում գտնվող ծառերը, կենտրոնական փողոցների մայթերին գտնվող ծառերը:

Աղբահանության ծավալը վերջին տարիներին բավականաչափ մեծացել է, որը նույնպես կնպաստի քաղաքի էկոլոգիայի բարելավմանը:

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշտարակը ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Գտնվում է միջպետական նշանակության Երևան-Գյումրի M1 և Երևան-Վանաձոր M3 մայրուղիների հատման կենտրոնում:

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 51.6 կմ., իսկ մակերեսը՝ 45.8 հա.:

Աշտարակում գործում են մեկ հետիոտնային և երկու ավտոմոբիլային կամուրջներ: Աշտարակի ճանապարհային երթևեկության նշանների մեծ մասը տեղադրված են, և նախատեսվում է դրանց թիվը ավելացնել:

Առաջիկայում նախատեսվում է ավտոկանգառների նշանների տեղադրումը, այնուհետև, լուսացույցերի տեղադրումը Ն.Աշտարակեցու և Պռոշյան, Վ. Պետրոսյան և Նարեկացու փողոցների հատման խաչմերուկներում:

Համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիների սպասարկման մակարդակը գտնվում է բավարար վիճակում: Առկա է երթուղին սպասարկող 2 կազմակերպություն /6 միկրոավտոբուս:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առևտրական, հասարակական սննդի, կենցաղային, տեխնիկական և այլ տիպի սպասարկումների զարգացումը հնարավորություն է տալիս աստիճանաբար բնակչության սոցիալական ոլորտի հետ կապված հարցերի լուծումը ապակենտրոնացնել և ծանրության կենտոնը տեղափոխել մասնավոր սպասարկումների վրա: Դա հնարավորություն է ստեղծում ազատ մրցակցության, և դրա շնորհիվ սպասարկումների որակի բարելավման ու գների աճի զսպմանը: Ջարգացումը տանում է առևտրի և սպասարկումների մանր, անկազմակերպ և տարերային ձևերից դեպի փոքր ու միջին կայուն, ստացիոնար ձևերի: Ձևավորվում է որոշակի կայուն եկամուտներ ունեցող մի խավ: Վերջինս վճարունակ է ոչ միայն գույքի, այլև արտադրական տարածքի դիմաց, ինչպես նաև տեղական տուրքերի գծով: Այդ խավը պոտենցիալ կերպով կարող է դիտվել, որպես ազատ միջոցների առաջանալուն գուզրնթաց՝ այլ ճյուղերում ներդրումներ կատարող և դրանց զարգացմանը նպաստող ուժ: Իսկ որպես հետևանք նա դառնում է նաև գործատու և աշխատատեղեր ստեղծող: Աշտարակ համայնքում գործող առևտրի, ծառայությունների ցանկը հավելված 4-ում

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի կրթական համակարգը ներառում է 6 հիմնական, 1 ավագ դպրոցները, հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների համար նախատեսված 1 դպրոցը և 5 մանկապարտեզները: Համայնքում գործող կրթական համակարգերից համայնքապատկան են հինգ նախադպրոցական ուսումնական հաստատությունները, որոնց գործունեությունը համակարգվում է համայնքապետարանի կողմից: ՆՈՒՀ-երում նախադպրոցական կրթություն են ստանում 3-6 տարեկան մոտ 615 երեխա:

Քաղաքում գործող ութ դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 2523, որոնց սպասարկում են 300 ուսուցիչ, որից ավագ դպրոցում համապատասխանաբար՝ 357/54:

Հիմնական կրթությունը իրականացվում է հիմնականում հանրակրթական դպրոցներում, որտեղ սովորողների թիվը գրեթե հաստատուն է և ունի աճի տենդենցներ: Համայնքապատկան են նաև համայնքում գործող 4 մասնագիտական դպրոցներ (երաժշտական, գեղարվեստի, պարարվեստի և մարզական), որոնց սովորողների ընդհանուր թիվը 413 է: Երաժշտական դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք, որտեղ գործում են դաշնամուրային, լարային, ժող. գործիքների, վոկալի դասարաններ:

Դպրոցում սովորող սաների թիվը հասնում է 244-ի: Գեղարվեստի դպրոցում ուսուցանվում են գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, դեկորատիվ կիրառական արվեստ, քանդակ, դիզայն, արվեստի պատմություն: Դպրոցում սովորողների թիվը հասնում է 100-ի: Պարարվեստի դպրոց-ստուդիայում ուսուցանվում են բազմաբնույթ պարեր, որի սաների թիվը հասնում է 100-ի:

ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակութային և երիտասարդական ակտիվ կյանքն ապահովում են երկու մշակույթի տները: Քաղաքային մշակույթի տունն ունի 450 նստատեղ, իսկ “Արայի” մշակույթի տունը գտնվում է վթարային վիճակում, որտեղ տեղակայված է գրադարանը, Հայորդաց տուն, 3 թանգարան և երիտասարդական կազմակերպություն (Երիտասարդական հիմնադրամի Արագածոտնի մասնաճյուղ) և 1 մարզային գրադարան: Քաղաքի ակտիվ մարզական կյանքն ապահովում են քաղաքային մարզադպրոցը, հանրակրթական դպրոցների տարբեր սպորտային խմբակները, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների տարածքային կազմակերպությունները, սպորտային ակումբը, հիմնարկ-ձեռնարկությունների թիմերը, մարզադաշտի ենթակայության տակ գործող մի շարք խմբակներ, անհատները: Մարզադպրոցի գործունեությունը դադարեցված է շենքի վթարային լինելու պատճառով: Մարզադպրոցի անբավարար և վթարային շենքային պայմաններից ելնելով 2009-ին սկսվել է նոր մարզական համալիրի կառուցումը, որը էլ ավելի կաշխուժացնի քաղաքի մարզական կյանքը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Աշտարակ քաղաքի առողջապահական համակարգում գործում են 1 բժշկական կենտրոն, 1 բժշկական ամբուլատոր պոլիկլինիկա, սանեպիդկայան, ատամնաբուժարան, շտապ բուժօգնության կայան և տասից ավելի դեղատներ: Առողջապահական համակարգում բուժաշխատողների միջին թվաքանակը` 272:

Հիվանդանոցում աշխատող բժիշկների թիվը 87 է: Բժշկական կենտրոնն ունի յոթ բաժանմունք, պոլիկլինիկան հինգ: Տարեկան սպասարկվում է մոտ 1851 հիվանդ: Ցածր է բուժաշխատողների աշխատավարձը: Այս բնագավառին հատկացվող գումարները բավարարում են միայն աշխատավարձի և կոմունալ ծախսերի վճարման համար:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ

ՏԱՐԱԾՔՆԵՐ

Քաղաքն ունի մեկ ընդարձակ զբոսայգի, երեք բացօթյա խաղահրապարակ, մեկ մարզադաշտ և Քասախի կիրճի բնական հանգիստի գոտին, ուր գործում են հանրապետությունում հայտնի «Աշտարակի Ձոր», «Աշտարակի լիճ» ժամանցի վայրերը, «Արևիկ» և այլ հանգստի գոտիներ:

Կապված 90-ական թվականների էներգետիկ ճգնաժամի հետ, քաղաքի կանաչ տարածքները մեծ վնաս կրեցին մասսայական ծառահատումներից: Անմիաթար վիճակում են քաղաքի զբոսայգիներն ու կանաչ գոտիները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 11748 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են միայն 4183 -ը, աշխատանք չունեն 7565-ը, սակայն վերջիններից միայն 794-ն են գրանցված Աշտարակի զբաղվածության տարածքային կենտրոնում որպես գործազուրկներ:

Համայնքի մոտ 6557 ընտանիքներից 3533-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 1023 ընտանիքները: Համայնքում բնակվում են նաև 1641 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 141 երեխա, բնակարանի կարիքավոր են 42 ընտանիքներ, բնակարանի բարելավման կարիք ունեն 1350 ընտանիքներ:

Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Աշտարակի ՄՕՏԳ-ի (պետական պատվերի շրջանակներում) և համայնքապետարանի կողմից, ինչպես նաև մի շարք դոնոր կազմակերպությունների կողմից՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքի ՏԻՄ-ի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին:

Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: 2016թ-ից հոկտեմբեր ամսից ԵԽ “Աջակցություն տեղական ժողովրդավարության ամրապնդմանը” և ԱՄՆ ՄԶԳ “ՀաՄաՏեղ” ծրագրի շրջանակներում Աշտարակ համայնքային զարգացման հիմնադրամի “Համայնքն՝ օնլայն” ծրագրի շրջանակներում կազմակերպվում են օնլայն հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, հեռարձակվում են առցանց տարբերակով՝ համայնքի ashtarak.am ինտերնետային կայքի, ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:

Աշտարակ համայնքը դեռևս 2015 թվականին սեփական նախաձեռնությամբ SMS-ների միջոցով անցկացվել են համայնքային միկրոհարցումներ՝ համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ բնակչության կարծիքը հաշվի առնելու համար: Այս առումով, նախկինում ձեռք բերված դրական փորձը պետք է կիրառեն նաև նորընտիր ՏԻՄ-երը:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է: Ավագանու որոշմամբ դեռևս չի ստեղծվել աղետների դեպքում համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովը, չի հաստատվել բնակչության տարահանման գործողությունների պլանը:

Համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող տարբեր ՍՊԸ-ների և ԱԶ-ների, առևտրի մանր կետերի, գործունեությամբ, որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացկամ հարաբերություններ: Սակայն, դրանով հանդերձ, միևնույն է, համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայումս առկա **ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները**: Դրանք են՝

- Համայնքի տարածքում կանաչ գոտիների բացակայությունը, մասնավորապես Կոմիտասի զբոսայգու անմխիթար վիճակն ու վերականգնման անհրաժեշտությունը
- համայնքի խմելու ջրի ջրամատակարարման ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակ, ջրամատակարարման ոչ բավարար մակարդակ,
- համայնքի ներսում տրանսպորտային հաղորդակցության, մատուցվող ծառայություններից օգտվելու սահմանափակ հնարավորությունները,
- Արայի մշակույթի տան հիմնովին, քաղաքային մշակույթի տան ընթացիկ նորոգման անհրաժեշտությունը
- Համայնքի մեծ մասը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի),
- Համայնքը չունի ժամանակակից աղբավայր, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազա և ֆինանսական հնարավորություններ՝ աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար,
- ներհամայնքային ճանապարհները և փողոցներն անբարեկարգ վիճակում են, չունեն արտաքին լուսավորության համակարգ, ճանապարհային երթևեկության նշաններ
- համայնքը չունի գյուղատնտեսական հողերի ոռոգման համակարգ, որի պատճառով համայնքի գյուղատնտեսական նշանակության վարելահողերը մեծամասամբ չեն

մշակվում, դրանք աստիճանաբար վեր են ածվել խոտհարքների, իսկ վերջիններիս տարածքները չեն բավականացնում համայնքում անասնապահության հետագա զարգացման համար,

- համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում,
- համայնքի գրեթե բոլոր մանկապարտեզների շենքերը (բացառությամբ՝ Արևիկ մանկապարտեզի) կարիք ունեն մասնակի կամ ամբողջական ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և դուռ-պատուհանների, սանհանգույցների փոխարինման,
- համայնքի գերեզմանատների մի մասը ցանկապատված չեն կամ առկա է ցանկապատերի վերանորոգման խնդիր,
- համայնքից տարեցտարի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում դպրոցների աշակերտների, մանկապարտեզների սաների թվերի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,
- համայնքի աշխատունակ բնակչության մեծ մասը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերադառնում համայնք,
- համայնքի տարածքում առկա եկեղեցիների և մատուռների մի մասը կիսավեր վիճակում են:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական

կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017- 2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Համայնքի Ա.Մուրադյան, Հասմիկ մանկապարտեզների շենքերի, մի քանի բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում:
- Պատմական միջուկի վերականգնում՝ նպաստելով համայնքում զբոսաշրջության զարգացմանը:
- Կոմիտասի անվան զբոսայգու վերականգնում և աջ ափի շուկայի տարածքում պուրակի հիմնում:
- Համայնքի արտադարոցական կազմակերպությունների շենքերի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների, պատուհանների և սանհանգույցների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով արտադարոցական կրթության որակը:
- Համայնքի բանուկ որոշ թաղամասերի գազաֆիկացում, գազամատակարարման ներբնակավայրային համակարգի ստեղծում և շահագործում, ներգրավելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին:
- Համայնքի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին:
- Հասրակական տրանսպորտի աշխատանքի բարելավում, ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի

բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:

- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ՀՏԶՀ-ի հետ՝ “Արևիկ” մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:

2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի ֆինանսական իրավիճակը կանխատեսված է առաջիկա 5 տարիների կտրվածքով և հստակ երևում է, որ միայն համայնքի սեփական եկամուտներով կամ տեղական բյուջեի միջոցներով հնգամյա ծրագրում նախատեսվող աշխատանքների իրականացումը իրատեսական չէ և պետք է ներգրավվեն այլ միջոցներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հ/հ	ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
											2015թ.	2016թ.	2017թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	446764,3	464266,0	460940,6	464530,6	466790,6	468260,6	470160,6	103,9	99,3	100,0	100,0	100,0
1	Հողի հարկ	22211,5	28000,0	28000,0	29000,0	30000,0	30500,0	31000,0	126,1	100,0	5,0	6,0	6,1
2	Գույքահարկ	115458,3	112000,0	115000,0	116000,0	116500,0	117000,0	117500,0	97,0	102,7	25,8	24,1	24,9
3	Տուրքեր	21071,5	24000,0	27610,0	28250,0	28750,0	29000,0	29350,0	113,9	115,0	4,7	5,2	6,0
4	Պաշտոնական դրամաշնորհներ	268687,2	268716,0	258760,6	258760,6	258760,6	258760,6	258760,6	100,0	96,3	60,1	57,9	56,1
5	Այլ եկամուտներ	19335,8	31550,0	31570,0	32520,0	32780,0	33000,0	33550,0	163,2	100,1	4,3	6,8	6,8

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ա) ըստ գործառնական դասակարգման

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ.%	2017թ. 2016թ. նկատ.%	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
											2015թ.	2016թ.	2017թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	468965,3	500111,5	464940,6	464530,6	466790,6	468260,6	470160,6	106,6	93,0	100,0	100,0	100,0
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	118336,6	184863,7	165556,7	166450	167450	170500	171450	156,2	89,6	25,2	37,0	35,6
2	Պաշտպանություն	88	200	200	250	250	250	250	227,3	100,0	0,0	0,0	0,0

3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	1995,1	0	0	0	0	0	0	0,0	0,0	0,4	0,0	0,0
4	Տնտեսական հարաբերություններ	12645,5	-111161,5	-226850	-231369,4	-232809,4	-237139,4	-237939,4	-879,1	204,1	2,7	-22,2	-48,8
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	54310,6	69000	85000	85500	86000	86750	87350	127,0	123,2	11,6	13,8	18,3
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	34539,8	46955,4	51000	52000	52400	52600	52600	135,9	108,6	7,4	9,4	11,0
7	Առողջապահություն	0	0	0	0	0	0	0	0,0	0,0	0,0	0,0	0,0
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	27807,2	58620,2	96900	97000	97500	97750	98000	210,8	165,3	5,9	11,7	20,8
9	Կրթություն	205834,2	225133,7	258633,9	260000	261000	261750	262250	109,4	114,9	43,9	45,0	55,6
10	Սոցիալական պաշտպանություն	13408,3	14500	11000	11000	11000	11500	11700	108,1	75,9	2,9	2,9	2,4
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր		12000	23500	23700	24000	24300	24500	0,0	195,8	0,0	2,4	5,1
	հավելումը	45101,8							0,0				

բ) ըստ տնտեսագիտական դասակարգման (հազար դրամ)

Հ/հ	ԾԱՆՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ 2015թ նկատ.%	2017թ 2016թ նկատ.%	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
											2015թ.	2016թ.	2017թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՆՍԵՐ	468965,2	500111,5	466940,6	464530,6	466790,4	468260,6	470160,6	106,6	93,4	100,0	100,0	100,0
Ա	ԸՆԹԱՏԻՎ ԾԱՆՍԵՐ	431860,3	465723	460940,6	464530,6	466790,4	468260,6	470160,6	107,8	99,0	92,1	93,1	98,7
1	Աշխատանքի վարձատրություն	75280,3	79071,7	79031,7	81180,6	81840,4	82500	83000	105,0	99,9	16,1	15,8	16,9
2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	255771,6	59177	55975	56250	56450	55610,6	55800	23,1	94,6	54,5	11,8	12,0
3	Տոկոսավճարներ	0	0	0	0	0	0	0	0	0	0,0	0,0	0,0
4	Սուբսիդիաներ	1713,5	203603,9	190233,9	191000	191700	192000	192000	11882,3	93,4	0,4	40,7	40,7
5	Դրամաշնորհներ	84660,4	94805,4	98500	98700	99000	100000	101000	112,0	103,9	18,1	19,0	21,1
6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	14115,8	15800	12300	12400	12550	12650	13000	111,9	77,8	3,0	3,2	2,6
7	Այլ ծախսեր	318,7	13265	24900	25000	25250	25500	25360,6	4162,2	187,7	0,1	2,7	5,3
Բ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ	82206,7	204200	288000	231369,4	232809,4	237139,4	237939,4	248,4	141,0	17,5	40,8	61,7
1	Հիմնական միջոցներ	82206,7	204200	288000	231369,4	232809,4	237139,4	237939,4	248,4	141,0	17,5	40,8	61,7
Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	-45101,8	-169811,5	-282000	- 231369,4	-232809,4	-237139,4	-237939,4	376,5	166,0665	-9,6	-34,0	-60,4
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-45101,8	-169811,5	-282000	-	-232809,4	-237139,4	-237939,4	376,5	166,0665	-9,6	-34,0	-60,4

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը (հազար դրամ)	22500	23500	23500	23700	24000	24300	24500	104,4	100,0

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՆ ՕՐԵՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏՐԱՆՏԵՐՏՆԵՐԸ

Հ/հ	Տրանսֆերտի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %
	ԸՆԴԱՄԵՆԸ ՏՐԱՆՏԵՐՏՆԵՐ	261409,3	252787,6	251453,9	251453,9	251453,9	251453,9	251453,9	96,7	99,5
1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	245162,6	251453,9	250120,2	250120,2	250120,2	250120,2	250120,2	102,6	99,5
2	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ, այդ թվում՝	14913	0	0	0	0	0	0	0	0
	<i>բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ</i>	14913	0	0	0	0	0	0	0	0
3	Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար տրամադրվող նպատակային հատկացումներ (ընթացիկ սուբվենցիաներ)	1333,7	1333,7	1333,7	1333,7	1333,7	1333,7	1333,7	100,0	100,0

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԸ

Հ/հ	Դրամաշնորհի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.	2016թ. 2015թ. նկատ. %	2017թ. 2016թ. նկատ. %
	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7278,1	7278,1	7306,7	7306,7	7306,7	7306,7	7306,7	100,0	100,4
1.	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների ՏԻՄ-երից	7278,1	7278,1	7306,7	7306,7	7306,7	7306,7	7306,7	100,0	100,4

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար:
- Բարենպաստ բնակլիմայական պայմանները գեղատեսիլ բնությունը:
- Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային ռեսուրսների առկայությունը
- Համայնքի տարածքում առկա պատմական միջուկը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Անմխիթար վիճակում են գտնվում կոմունալ տնտեսության, ջրամատակարարման և ջրահեռացման, ոռոգման ցանցերը, ճանապարհային տնտեսության զգալի մասը:
- Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն համայնքի կրթական, մշակութային և մարզական հիմնարկների շենքերն ու շինությունները, բակային տարածքները:
- Համայնքի զգալի տարածքներում վատ է կազմակերպվում գյուղատնտեսական անհատական տնտեսություններին ոռոգման ջրի մատակարարումը:
- Նախորդ տարիների ընդհանուր տնտեսական ճգնաժամի պատճառով համայնքում ավելացել է գործազուրկների քանակը, առկա է նաև թաքնված գործազրկության խնդիրը:
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքի ոչ բոլոր թաղամասերում խմելու ջրի ջրամատակարարման ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը և ջրամատակարարման ոչ բավարար մակարդակը
- Համայնքի որոշ հատվածներում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը
- մշակույթ տների և մշակութային օջախների ոչ բարվոք վիճակը
